

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

\_\_\_\_\_2019թ.

թիվ \_\_\_\_\_/Ա/

**ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ  
ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ձմեռային զորակոչից մինչև՝

1) 2019 թվականի ամառային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրամադրել տարկետում՝

ա. Նորայր Արմենի Պողոսյանին՝ (ծնված 23.12.1999թ, հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Սևերսկի ԴՈՍ 78, սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում):

բ. Օնիկ Օնիկի Սահակյանին՝ (ծնված 25.12.1999թ, հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Թռչունյան տուն» գիշերօթիկ հաստատություն, Ղարսի խճ 3/1, սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում):

գ. Դավիթ Բենյամինի Ալեքսանյանին՝ ծնված 30.10.1999թ /հաշվառման վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Մ.Մաշտոցի 118ա/, սովորում է Երևանի թիվ 112 ավագ դպրոցի 12-րդ դասարանում:

դ. Սերգեյ Արմենի Վարդանյանին՝ ծնված 19.11.1999թ /հաշվառման վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Սիսակյան 9/, սովորում է Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի 12-րդ դասարանում:

2) 2020 թվականի ամառային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության

զորակոչից տրամադրել տարկետում՝ Գրիգոր Գարիկի Խաչատրյանին՝ ( ծնված 16.11.1999թ, հաշվառման վայրը ՀՀ Շիրակի մարզ, գ. Լանջիկ 4 փ, 20 տուն, սովորում է Երևանի «Մխիթարեան կրթահամալիր» ՀԿ-ի 11-րդ դասարանում):

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Նորայր Արմենի Պողոսյանը /ծնված 23.12.1999թ/ սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում: 2018թ. դեկտեմբերի 23-ին **լրացել է** նրա 19 տարին: Հիվանդության պատճառով ուսումնառության ավարտը ուշացել է:
2. Օնիկ Օնիկի Սահակյանը /ծնված 25.12.1999թ/ սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Թռչունյան տուն» միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում: 2018թ. դեկտեմբերի 29-ին **լրացել է** նրա 19 տարին: Հիվանդության պատճառով ուսումնառության ավարտը ուշացել է:
3. Գրիգոր Գարիկի Խաչատրյանը /ծնված 16.11.1999թ/ սովորում է Երևանի «Մխիթարեան կրթահամալիր» ՀԿ-ի 11-րդ դասարանում: 2018թ. նոյեմբերի 16-ին լրացել է նրա 19 տարին: 2017թ. Ռուսաստանի Դաշնությունից վերադառնալու պատճառով ուսումնառությունը կրկնել է նույն դասարանում:
4. Դավիթ Բենյամինի Ալեքսանյանը /ծնված 30.10.1999թ/ սովորում է Երևանի թիվ 112 ավագ դպրոցի 12-րդ դասարանում: 2018 թվականի հոկտեմբերի 30-ին լրացել է նրա 19 տարին: Ռուսաստանի Դաշնությունում ապրելու պատճառով ուշ է հաճախել դպրոց:
5. Սերգեյ Արմենի Վարդանյանը /ծնված 19.11.1999թ/ սովորում է Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի 12-րդ դասարանում: 2018թ. նոյեմբերի 19-ին լրացել է նրա 19 տարին: 2017թ. Ռուսաստանի Դաշնությունից վերադառնալու պատճառով ուսումնառությունը կրկնել է նույն դասարանում:
6. Նորայր Արմենի Պողոսյանը, Օնիկ Օնիկի Սահակյանը, Դավիթ Բենյամինի Ալեքսանյանը և Սերգեյ Արմենի Վարդանյանը հանրակրթական ուսումնական ծրագրերը ավարտելու են 2019 թվականի հունիս ամսին: Ուստի վերը նշվածներին նպատակահարմար է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև 2019 թվականի ամառային զորակոչը:
7. Գրիգոր Գարիկի Խաչատրյանը՝ ուսումնական ծրագիրը ավարտելու է 2020 թվականի հունիս ամսին: Այդ նկատառումով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է նախատեսվում տրամադրել մինչև 2020 թվականի ամառային զորակոչը:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխություն
1	<p>«Առաջարկության նախարարություն 08.01.2019թ. N ՊՆ/510-2108</p>	<p>««Մի շարք քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին»» «Առաջարկության որոշման նախագիծ</p>	<p>ընդունվել է</p>	<p>նախագծի 1-ին և 2-րդ ««Մինչև»» բառը փոխարինել ««Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ձմեռային զորակոչից մինչև»»</p>
2.	<p>«Առաջարկության նախարարություն 24.01.2019թ. N 01/280-19</p>	<p>««Նորայր Արմենի Պողոսյանին, Օնիկ Օնիկի Սահակյանին և Գրիգոր Գարիկի Խաչատրյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին»» «Առաջարկության որոշման նախագիծ</p>	<p>առաջարկություն չունի</p>	